Հաստատում եմ՝

Տնօրեն՝ Տ. Գևորգյան

30.08.2023թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ << ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՊԵՐՃՈՒՀԻ ԵՎ ԱՐՄԷՆ ՆԱԼՊԱՆՏԵԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

ՊՈԱԿ-Ի 2023-2024 ՈՒՍՏԱՐՎԱ

7Ա – ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԴԱՍՂԵԿԻ ՏԱՐԵԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

ԴԱՍՂԵԿ – ԳԵՎՈՐԳՅԱՆ ՄԱՐԻԱՄ

Քաղվածք

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ <<Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>>, պետական ոչ առևտրային կազմակերպության (կրճատումով)

42. Դասարանի ղեկավարը (դասղեկը)

ա) դաստիարակչական աշխատանք է կատարում՝ իր դասարանի սովորողների շրջանում՝ սերտորեն համագործակցելով մյուս ուսուցիչների հետ,

բ) ապահովում է սովորողների նկատմամբ հաստատության և ընտանիքի մանկավարժական պահանջների միասնականությունը.

գ) անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպում է ուսումնական օգնություն,

դ) իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, հաստատության տնօրինությանը ներկայացնում սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին

ե) կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ, հետևում տնային հանձնարարությունների կատարմանը, ուսման և հանգստի կազմակերպմանը,

զ) հաստատության մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում վարքի կանոնները կոպտորեն խախտած սովորողի հարցը.

է) արգելվում է սովորողների, ուսուցիչների և ծնողների այն նախաձեռնությունները, որոնք կարող են սովորողի առողջության, կյանքի համար վտանգ պարունակել կամ խաթարել ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացումը:

71. Հաստատության մանկավարժական աշխատողները պարտավոր են ապահովել կրթական ծրագրերի կատարումը, հանրակրթական պետական չափորոշիչներով որոշվող ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը սովորողների կողմից:

73. Սովորողն իրավունք ունի՝

ա) անվճար ստանալու տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն,

բ) անկախ բնակության վայրից սահմանված կարգով ընտրելու հաստատությունը և ուսուցման

գ) անվճար օգտվելու հաստատության առանձին ծառայություններից.

դ) հաստատությունում յուրացնելու լրացուցիչ վճարովի կրթական ծրագրեր.

ե) ազատ արտահայտելու սեփական հայացքներն ու համոզմունքները

զ) առանց հիմնական կրթություն ստանալու՝ 16 տարին լրանալուց հետո, ծնողների (որդեգրողների կամ հոգաբարձուի) համաձայնությամբ, թողնելու ուսումը:

74. Հաստատությանն արգելվում է, առանց ծնողների և սովորողների համաձայնության, սովորողներին ընդգրկել այնպիսի աշխատանքներում, որոնք նախատեսված չեն հանրակրթական ծրագրերով և սույն կանոնադրությամբ:

75. Արգելվում է սովորողների նկատմամբ հոգեկան և ֆիզիկական բռնության գործադրումը:

76. Սովորողը պարտավոր է բարեխղճորեն սովորել, խնամքով վերաբերվել հաստատության գույքին, հարգել հաստատության սովորողների և աշխատողների իրավունքներն ու արժանապատվությունը, պահպանել հաստատության ներքին կարգապահական

կանոնները:
77. Հաստատության ներքին կարգապահական կանոնները կոպտորեն խախտելու համար սովորողը նախարարության սահմանած կարգով կարող է հեռացվել հաստատությունից:
78. Ծնողն իրավունք ունի պաշտպանելու երեխայի օրինական շահերն ու իրավունքները, մասնակցելու հաստատության կառավարմանը:

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (*դասարանի ընդհանուր բնութագիրը*).

VII ա դասարանում սովորում է 23 աշակերտ՝ 10 աղջիկ, 13 տղա: Նախորդ ուսումնական տարին գերազանց առաջադիմությամբ ավարտել է 3 աշակերտ: Աշակերտներն ունեն տարբեր կարողություններ: Դասարանում մեծ թիվ են կազմում ջանասիրաբար աշխատող աշակերտները, որոնք ձգտում են գերազանցության: Աշակերտները պարտաճանաչ են հասարակական աշխատանքներում, համերաշխ են, հարգում և հետևում են դպրոցի ներքին կարգապահական կանոններին, դպրոց են հաճախում անհրաժեշտ ուսումնական պարագաներով, բացակայությունները շատ չեն:

2. ՈՒսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում.

Այս ուստարում նախատեսվում է առավել հաճախակի կազմակերպել տարբեր բովանդակությամբ զրույցներ, քննարկումներ, ինչպես դասղեկի ժամերին, այնպես էլ դասաժամերին՝ ըստ դասանյութի և դրա արտահայտած գաղափարի:
Ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետության բարձրացման համար կարևոր է եռակողմ՝ դասղեկ-ծնող- աշակերտ սերտ կապը, որը պետք է նպատակաուղղված լինի ուսումնական գործընթացի առաջադիմությանը: Դասարանում կան դժվար դաստիարակվող աշակերտներ: Նրանց վարքի վերահսկողության համար նախատեսվում են հաճախակի հանդիպումներ ծնողների հետ՝ երեխաների պարտադիր ներկայությամբ, ինչպես նաև անհատական զրույցներ հոգեբանի և դասղեկի հետ:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն

Յուրաքանչյուր աշակերտի համար կարևոր է հայեցի դաստիարակությունը: Աշակերտի մոտ պետք է ձևավորել այն գիտակցումը, որ ինքնէ հայ մշակույթի և լեզվի կրողն ու փոխանցողը, քրիստոնեական արժեհամակարգի անխախտ հետևորդը: Նախատեսվում է բացատրական զրույցների և էքսկուրսիաների միջոցով ձևավորել կայուն և դրական աշխարհայացք հոգևոր ոլորտի նկատմամբ: Հայը պետք է մշտապես զգոն լինի, լինի ամուր հոգով ու հավատով, քանի որ անգամ այժմ մենք գտնվում ենք թշնամու մշտական հարձակումների ներքո:

3.2 Գեղագիտական դաստիարակություն

Գեղագիտական դաստիարակության համար նախատեսվում է կազմակերպել այցելություններ մշակութային օջախներ, հատկապես թատրոններ և պատկերասրահներ: Գեղագիտական ճաշակի ձևավորման հարցում կարևոր է նաև ընթերցասիրության խթանումը և խրախուսումը: Նաև դասղեկի ժամերին նախատեսվում են տեսաներկայացումների ցուցադրություններ՝ համաշխարհային մշակույթի և հայ մշակույթի երևելի անձանց կյանքի և գործունեության մասին:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն
Նախատեսվում են տարաբնույթ զրույցներ ինչպես դասղեկի ժամերին, այնպես էլ դասապրոցեսի ընթացքում: Ռազմահայրենասիրական դաստիարակության հարցում կարևոր է նվիրյալ հայորդիների կյանքի և գործի ուսումնասիրումը, դավանած գաղափարներին հետևելը: Նրանց օրինակով և ոգով պետք է ոգևորել ու խրախուսել աշակերտներին:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն
Պարբերաբար անցկացնել քննարկումներ անձնական հիգիենային և առողջ ապրելակերպին նվիրված: Պահանջել և լինել հետևողական, որ աշակերտները լինեն պահանջկոտ սեփական անձի նկատմամբ՝ ֆիզիկական պատրաստվածության տեսանկյունից:

3.5 Աշխատանքային դաստիարակություն
Արթնացնել սեր, հարգանք, ճիշտ վերաբերմունք շրջակա միջավայրի, ազգային ունեցվածքի նկատմամբ: Սերմանել հոգատար վերաբերմունք դպրոցամերձ տարածքի, դասարանի գույքի հանդեպ, բարձրացնել աշակերտների բարոյականային որակները:

3.6 Բնապահպանական դաստիարակություն
Կազմակերպվող էքսկուրսիաների ընթացքում աշակերտների մոտ ձևավորել սրտացավ վերաբերմունք բնության նկատմամբ: Պատեհ բոլոր առիթների դեպքում աշակերտներին ծանոթացնել առկա բնապահպանական խնդիրներին:

3.7 Դպրոց-ընտանիք կապը
Մշտական կապի և փոխհամագործակցության մեջ լինել ծնողների հետ՝ ի նպաստ աշակերտների: Սահմանված ժամկետներում անցկացնել ծնողական ժողովներ: Նպաստել ծնողների անընդմեջ վերահսկողության բարձրացմանը, քանի որ նրանք պետք է միշտ հետևողական լինեն երեխաների ուսման ու կարգապահության նկատմամբ:

Դասղեկի տարեկան աշխատանքային պլան

Դպրոց ՀՀ Արմավիրի մարզի «Նալբանդյանի Պերճուհի և Արմէն Նալպանտեանների անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Դասարան 7-րդ դասարան

Դասղեկ Մարիամ Գևորգյան

Հաշվի առնելով և՛ ժամանակակից դպրոցի սաների հետ աշխատելու դժվարությունները, և՛ տարիքային շրջանի հետ կապված դժվարությունները, և՛ դասարանի անհատական առանձնահատկությունները, որպես դասղեկ,նախընտրում եմ ,,Դասղեկի ժամ ,, դասաժամերը կոչել բարոյագիտության և կյանքի դասաժամեր:
Այդ դասաժամերի զրույցի և բանավեճերի թեմաներն ընտրելիս օգտվել եմ առակների տարբեր գրքերից, մանկավարժական ամսագրերից և այլ բարոյախրատական ստեղծագործություններից: Ավելացնեմ նաև, որ ներքևում նշված թեմաների ցուցակը միանգամայն փոփոխական է, քանի որ նպատակս է ուսումնասիրել երեխաների վարք ու բարքը և նկատված թերացումները վերացնել ու բացառել: Ընթացքում դասարանի վարքագիծը, ուսումնական առաջադիմության մակարդակը, կամ որպես աշակերտ նրանց պահվածքը կարող են նոր նպատակներ ծնել և թելադրել նոր ոճով

ու թեմատիկայով աշխատանք: Իսկ այդպիսի փոփոխություններն ու նորաբարությունները կարտացոլվեն դասդեկի իմ օրվա պլանում:

N	Անուն/ազգանուն
1	Հայանե Լիանա
2	Հովսեփյանե Գյուսանի
3	Հովհաննիսյանե Հասմիկ
4	Գալստյանե Կարինե
5	Զաքարյանե Գևորգ
6	Զաքարյանե Պողոսյան
7	Թադևոսյանե Սոնա
8	Խաչատրյանյանե Աշոտ
9	Խաչատրյանե Գևորգյան
10	Խաչատրյանե Սարգիս
11	Խուրշուդյանե Խաչիկ
12	Հովհաննիսյանե Շուշանիկ
13	Հովհաննիսյանե Հարությունե
14	Պետրոսյանե Գայանե
15	Պետրոսյանե Էմիլիա
16	Պետրոսյանե Հրաչե
17	Պերճարյանե Հարությունե
18	Պողոսյանե Գոռ
19	Ջանպարյանե Վարդիթեր
20.	Շահբաշյանե Օնիկ
21.	Սահակյանե Պետրոսյան
22.	Սարգսյանե Մարիկ
23.	Պետրոսյանե Հովհաննեսյան

Դասարանի ավագի և դասարանական խորհրդի անդամների հետ տարվող զրույցներ և աշխատանքներ

N	Թեմա	Ամսաթիվը
1	Էլեկտրոնային օրագրից օգտվելու կարգը	
2	Ինչպես կատարել աշակերտների բացակայությունների ամենօրյա հաշվառում	
3	Դասարանական խորհուրդ	
4	Դասարանում առկա խնդիրներ	
5	Հիգիենայի կանոնների պահպանումը դասարանում	
6	Աշակերտ-ուսուցիչ փոխհարաբերություններ	
7	Աշակերտների պատրաստվածությունը դասերին	
8	Կարգապահություն և օրինակելի վարք	
9	Միջոցառումների կազմակերպում	

Ծնողական ժողովներ

N	Թեմա	Նպատակը	Ժամկետը
1	Կազմակերպչական հարցեր	Դպրոց-ընտանիք կապի ամրապնդում: Ծնողը երեխայի առաջին և ամենակարևոր ուսուցիչն է: Ոչ մի հակասություն չի կարող լինել դպրոցի և ընտանիքի միջև, եթե ծնողներն ու դպրոցը հաջողությամբ համագործակցում են:	Սեպտեմբեր
2	Ա. Կրթության դերն ու նշանակությունը: Բ. Առաջադիմության հետ կապված հարցերի քննարկում:	Ծնողները գիտակցեն՝ հասարակության մտավոր ներուժն այն գրավականն է, որն ապահովում է ինչպես պետության հզորությունը, այնպես էլ յուրաքանչյուր քաղաքացու և ընտանիքի բարեկեցությունը:	Դեկտեմբեր

3	Համակարգչի դերը երեխաների կյանքում	Օգնություն ծնողներին	Մարտ
4	2023-2024 ուսումնական տարվա ամփոփում: Նոր խնդիրների և դրանց լուծման ուղիների առաջադրում:	Դպրոց-ընտանիք կապի ամրապնդում	Մայիս

Հ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը
	ՍԵՊՏԵՄԲԵՐ	
1	Գիտելիքի և դպրության տոն:	01.09.2023թ
2	Ժամանակի ճիշտ տնօրինելու մասին զրույց:	08.09.2023թ
3	Դասարանական աշակերտական խորհրդի ընտրություն;	15.09.2023թ
4	Անկախությունը մեծագույն արժեք և նվաճում. ՀՀ պետական խորհրդանիշները /զրույցի անցկացում/:	22.09.2023թ
5	Երկրագունդը բոլորիս տունն է:	29.09.2023թ.
	ՀՈԿՏԵՄԲԵՐ	
1	Աշակերտական ինքնավարության օր («Ուսուցչի դերում այսօր ես եմ»):	06.10.2023թ.
2	Ովքե՞ր են իմ ընկերները: Ի՞նչն եմ կարևորում ընկերության մեջ:	13.10.2023թ.
3	Աշունը և ես: «Ոսկե աշնան գույներն իմ խոհերում»:	20.10.2023թ.
4	Մոտիվացիա: Ի՞նչն է ինձ առաջ մղող ուժը:	24.10.2023թ.
	ՆՈՅԵՄԲԵՐ	
1	Ինտերակտիվ խաղեր:	03.11.2023թ.
2	Թրաֆիքինգի առաջացման պատճառները:	10.11.2023թ.
3	Սեմինար-քննարկում «Ինչպե՞ս հաղթահարել վախերը »	17.11.2023թ.
4	«Մաքրությունն՝ առողջության երաշխիք»	24.11.2023թ.
	ԴԵԿՏԵՄԲԵՐ	
1	Բնական աղետներ. ին՞չ է երկրաշարժը: Սպիտակի աղետալի երկրաշարժից տարիներ անց. որքանո՞վ ենք մենք պատրաստ բնական և տեխնածին աղետներին:	01.12.2023թ.
2	«Մարդն իր գործով է ճանաչվում»;	08.12.2023թ.
3	Համակարգիչն ընկե՞ր է, թե՞՝ թշնամի: Մեդիագրագիտություն/պաշտպանություն և անվտանգություն, համակարգչային խաղերի բացասական հետևանքները վարքի վրա/:	15.12.2023թ.
4	«Տարեմուտի խոհեր» ամանորյա միջոցառման նախապատրաստում և անցկացում	22.12.2023թ.
	ՀՈՒՆՎԱՐ	
1	« Աշխարհընկալում, փոխըմբռնում: Ես հարգում եմ քո կարծիքը»	12.01.2024թ.
2	Հետազոտական աշխատանք, աշխատանքի քայլաշարի մշակում ա/ « Ես և իմ անունը» բ/ « Ո՞վ և ինչու՞ է ընտրել իմ անունը» գ/« Իմ անվան ծագումնաբանությունը և նշանակությունը» դ/ « Իմ	19.01.2024թ.

	անվանակից հայտնիները»	
3	«Ո՞վ է ինձ համար հերոս»:	26.01.2024թ.
	ՓԵՏՐՎԱՐ	
1	« Առողջ մարմնում՝ առողջ հոգի»:	02.02.2024թ.
2	Շնորհալի աշակերտների ցուցակի կազմում: «Ինչքանո՞վ ենք յուրաքանչյուրս պատրաստ պահպանելու մեր ազգային որակները»	09.02.2024թ.
3	«Փողոցներում և ճանապարհներին սովորողների վարքի հիմնական կանոններ»	16.02.2024թ.
4	«Մեր լեզուն, մեր խոսքը»	23.02.2024թ.
	ՄԱՐՏ	
1	Սպարապետ Վ.Սարգսյանի ծննդյան օրվան նվիրված զրույց, նրա մասին պատմող ֆիլմի դիտում:	02.03.2024թ
2	Կանանց տոնին նվիրված բացիկների պատրաստում: Ծանոթություն տոնի առաջացման աղբյուրներին, ֆիլմի դիտում:	09.03.2024թ
3	«Քաղաքավարություն ամեն օր»	16.03.2024թ
4	Սուտը դատապարտում եմ:	30.03.2024թ
	ԱՊՐԻԼ	
1	Կատակում ենք միասին. Հումորը մեր կյանքի անբաժան մասն;	06.04.2024թ.
2	Ավետման տոն, Մայրության և գեղեցկության տոնի առթիվ անակնկալ մայրերին	13.04.2024թ.
3	Բացահայտում եմ աշխարհը/էքսկուրսիա	20.04.2024թ.
4	Հայոց Մեծ եղեռնին նվիրված քննարկում, ֆիլմի դիտում. « Ու պիտի ապրենք» հանդիսավոր տողան	27.04.2024թ.
	ՄԱՅԻՍ	
1	«Բախտավորությունն այնէ կյանքում, որ ձեռքեր ունես կառուցելու...» Աշխատավորների միջազգային օրվա առաջացումը	04.05.2024թ.
2	« Տարբեր սերունդների անխուսափելի բախում» :	11.05.2024թ.
3	« Ինչ սպորտաձև եմ նախընտրում» : « Ճանաչենք մեր օլիմպիական չեմպիոններին»	18.05.2024թ.
4	« Որտեղից եմ գալիս և ուր եմ գնում» Ամառային արձակուրդին երեխաների հանգստի և ժամանցի մասին:	25.05.2024թ.

Նախատեսում եմ նաև «Բաց դաս/եր/», որի/որոնց/ ընթացքում թեմայի ընտրությունը կկատարեն երեխաները՝ ընտրելով իրենց ավելի հոգեհարազատ թեման: